

ԴԱՅՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒՆՔԸ

Ա. ՎԱՐԵԼՈՒԻ, ՀԱՐԹԵԼՈՒԻ և ՀԵՐԿԵԼՈՒԻ

Արօր նկ. I, գութան նկ. II, արօնալ նկ. III, ջղլա (թ.) նկ. III, փոցխ *) (զարեւու) նկ. IV, տափան նկ. IV:

Բ. ՀՆՁԵԼՈՒԻ և ՀԱԽԱՔԵԼՈՒԻ

Գերանդի նկ. X, մանգաղ նկ. X, եղաններ նկ. IX, փոցխ նկ. IX, կէտեր նկ. IX:

Գ. ԿՐԵԼՈՒԻ

Կոռնի սալ նկ. V, որանի սալ նկ. VI, սահնակ նկ. VIII:

Դ. ԿԱԼՍԵԼՈՒԻ

Կամ նկ. X, կալի-թի նկ. IX, եղաններ նկ. IX, կապտոն նկ. IX, ցախաւել նկ. X, թէճի-թի նկ. IX, հոսելի նկ. IX, մաղ նկ. X, կոտ նկ. X, ջուալ, քթոց:

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ.

- I. Արօր, կանախ, սարկաւ, գործեր, արօրի խոփ, արօրը լոր-
խած լծին, չորոցի չղթալ, հօտադի սանդուխ: Արօնալի մասը
(սխալմամբ ալտեղ ընկած արտանկարելիս):
- II. Գութան, սրբիչ, գութանը գոնելին կապելու չղթալ (ջան-
քարէկ թ.), գութանի գոնէլ, գութանը կապած գոնէլին,
գութանի խոփ:
- III. Արօնալ կամ լարնալ կամ անկջով արօր, ջղլա (թ.) երկու տե-
սակ դմակով՝ չաթալ և լալն:

*) Նկարներում սխալմամբ գրած է փոցղ:

- IV. Տափան, տափանի տուփ, վարելու փողիս:
 V. Կոռնի սալ, սալը լորիած լծին:
 VI. Որանի (օրնի) սալ, շերիտ կամ ճոպան, ճիպոտներ, մարակ, զամշի (թ.):
 VII. Սալի մասերը. անիւ, կունտ (ժ.), բարձեր, որանի սալի և կոռնի սալի սեռեր, փոկ, շղթալ:
 VIII. Սահնակ, գոմէշի լուծ, ամուլի լուծ, չորոցի լուծ, երկաթէ սամի:
 IX. Կալի-թի, թէհի-թի, երկաթէ եղան, փալտէ եղաններ, փոցիս, հոսելի (հուսելի ժ.) կապտոն կամ կալքաշ, հալ, կէտեր կամ նետեր:
 X. Կամ, կամբ կէսը հակառակ կողմով, զերանդի, մանգաղ, էրս (թ.), չաքիւճ (թ.) (մուրճ), մասաթ (թ), խարտ, կուժ, մաղ, կոտ, կեմ:


Ա. ՎԱՐԵԼՈՒ, ՀԱՐԹԵԼՈՒ և ՀԵՐԿԵԼՈՒ

Արօր (հարօր ժ.) նկ. I.

Արօրը վարելու և հերկելու *) ամենակարևոր գործիքն է: Արօրին լծում են 2 զուգ եղ, առաջին (արօրին լծած) լուծքը կոչւում է ամուլ (համուլ ժ.), իսկ երկրորդ զուգը չորոց (չորոցք ժ.) կամ հորիկ, (գոմէշները լծում են ամուլին) և սկսում են վարել արտի մի ականջից, թեք դիրքի ակօսներով:

*) Մեր այժմեան գրական լեզուի մէջ վարկել և հերկել բառերն իրար հետ խառնում են և միևնույն իմաստով են գործածում. քաղց նրանց նշանակութիւնները տարբեր են. վարել ասում են այն գործողութեանը, որ գիւղացին արտը վարում է ցանելու համար, որ լինում է ցանոցին. իսկ երբ հնձած և 1—2 տարի հանգստացած արտը փորում է արօրով կամ գութանով, միւս տարուալ համար պատրաստում, պարարտացնում, որ ցանէ՝ դա կոչւում է հերկել, որ լինում է հերկոցին, այսինքն լունիս և լուլիս ամիսներին ցանքից լեռով:

Գութանով արտը հերկում են մի անգամ, արօրով կամ արօնալով հերկում են 1—2, երբեմն 3 անգամ. այսինքն, մի անգամ սոփորականի պէս հերկելուց լեռով՝ միւս անգամ ևս խաչադիր ակօսներով են հերկում-խառնում, որ կոչւում է եղել. երբեմն էլ պապահում է, որ լաւ խառնելու համար հերկում են երրորդ անգամ, Հերկելու արտը թէ՛ նոր հնձած է՝ կոչւում է խոզան. իսկ եթէ 1—2 տարի մնացած է հանգստանալու՝ կոչւում է արօս:



Արօրը գետինը պատռում է միջին թուով 8 վ. խորութեամբ. մանկալն արօրի մանից բռնած հետը գնում է. ամենեղ, ուր ցեխ է և արօրը խիստ թաղուելով շատ խորն է գնում՝ մանկալը մանից քաշում է վերև. իսկ ամենեղ, ուր գետինն ամրացած է լինում և արօր չի բռնում՝ ոտը գնում է առատամի դմակին և ճնշում ներքև:

Արօրի ծալրից, գործնորի տեղից (12) լծում են առաջին զույգ՝ ամուլը, իսկ միւս զույգը (հորիկը), շղթալով միացնում են թրից քիչ առաջ եղած կեռից (7):

Շատ քիչ է պատահում, որ արօրին լծեն մի զույգ եղ, դա ամն ժամանակ է լինում, երբ գիւղացին ունի մի զույգ եղ և մօտգամ *) չէ նորում, կամ երկիրը խիստ փափուկ է լինում:

Արօրի համցողը սովորաբար լինում է կեչի փալտից, որ թէ ճկուն է լինում և թէ դիմացկուն, բուկը (10) բնականից ծուր. առատամն ու թուրը՝ կակալ փալտից, իսկ մանը կամ կեչի կամ ուրիշ փալտից, խոփն՝ երկաթից:

Արօրն արտը տանելու-բերելու ժամանակ շատ անգամ բկի կողմով գցում են եղների ուսին, իսկ գործնորի կողմը քաշ է դալիս գետնի երեսից:

Արօրի սարքերն են, կանախ, սարկաւ, գործնոր, խոփ, լուծ և սանդուխ (նարսովան թ.):

14) Կանոխ, նկ. I.

Կանախը կեչի կամ հացի կոշուած փալտից է լինում. նա ուրուած, ծալրը ծալրի վրայ հեծցրած, ամրացրած մեր Մ տառի կերպարանքով մի օղակ է: Կանախը ծառալում է նրա համար, որ անցկացնեն արօրի ծալրին և վերի մասից միացնեն փոկով լորխած **) լծին, տես ձև 16, նկ. I.

*) Մօտգամ կոչւում են ամն դրացիները, որ միանում են իրար հետ և միասին աշխատում: Մօտգամ գոյականն անունը դուրս է եկել մօտ և գալ խօսքերից:

**) Լորխել կոչւում է արօրի ծալրն ու սալի գլուխը լծին փոկով միացնելու-կապելու ձևը. տես նկ. V. ձև բ, ուր աւելի պարզ է:

13) Սարկաւ, նկ. I.

Սարկաւը, որ նույնպէս կեչի կամ հացի փալտից է լինում՝ աւելի մեծ է քան կանուխը և ձուածնէ սարկաւը ծառայում է նրա համար, որ կախ անեն փոկից, որպէսզի նրա միջով անցկացնեն չորոցի շղթան, ամուլի ոտքերի տակը չընկնելու և կարգը պահպանելու համար *):

12) Գործետոր, նկ. I.

Գործետորը, որ ամուր փալտից է լինում՝ ծառայում է նրա համար, որ անցկացնեն արօրի ծալրի ծակերից մէկին. ալդալիսով միացնում են լորեսած կանուխը արօրի ծալրին:

Արօրն ունենում է համի ծալրին 2—3 ծակ, այդ ծակերը նրա համար են, որ եթէ շատ խոր փորէ երկիրը՝ փոխեն գործետորի տեղը դէպի ծալրը. իսկ եթէ շատ խոր է գնում՝ դէպի ետ. դրանից է կախուած ակօսի խորութիւնը կամ ծանծաղութիւնը:

8) Խոփ, նկ. I.

Խոփը լինում է երկաթից, ծալրը կռած (զոթած ժ.) հասարակ պողպատից կամ չուգունից, որ ուշ մաշուի:

15) Սանդուխ, նարտվան (թ). նկ. I.

Սանդուխը կամ ինչպէս իրենք են կոչում նարտվանը (թ.) ունենում է 2—3 պտիճան, շինած երկու ձողից կամ մի հաթալ փալտից. նրա երկու ծալրերը կապում են չորոցի լծին, իսկ ներքին ծալրը (քիթը ժ.) քարշ է գալիս երկրի երեսով. նարտվանի վրայ նստում է տակաւին մանուկ հօտաղը, որ սկզբի տարին դեռ չի կարող նստել եզներին ուսին:

Արօրի մանից բռնելով մանկալը քշում է ամուլն, իսկ չորոցի ուսին նստած հօտաղը՝ քշում է չորոցը: Հօտաղը փոխնէփոխ նստում է այն արջառի ուսին, որ խամի վրայով է գնում, Չորոցին ընդհանրապէս լծում են արջառներ:

Մանկալը մի ակօս գնալով, դառնում, գծում է միւս ակօսը, ինքը միշտ չվարած կողմի հետ գնալով:

Եթէ զուգերից մէկը գնում է մի անգամ ակօսի միջով՝ միւս անգամ կը գնալ խամի վրայով:

Լուծ. նկ. VIII.

Լուծերը լինում են 3 տեսակ. գոմէշի լուծ բ. ամուլի լուծ գ. չորոցի լուծ դ.:

*) Սարկաւի տեղ շատ անգամ գործ են ածում մի արշին երկարութեամբ շղթայ:

Բ. ԳՈՍԷՉԻ ԼՈՒԾ.

Սա համեմատաբար աւելի մեծ է լինում, քան միւսները, սրա սամիները լինում են երկաթից, որոնց ծալրերն իրար հետ կապում են ոչ թէ սամոտալով, այլ կաշեցէ ծոպով, որին իշկիլ (թ.) (8) են ասում:

Որպէս զի երկաթէ սամու գլուխը (9) չմաշէ, չծակէ լուծը՝ նրա տակ անց են կացնում մի կոլոր, տափակ ծակ-երկաթ, որ կոչւում է փուլ (թ.) (7):

Գ. ԱՄՈՂԻ ԼՈՒԾ.

Ամոլի (համոլի Ժ.) լուծն աւելի կարճ է լինում, քան չորոցինը. այս կարճութիւնը նրա համար է, որ լծուած ժամանակ եղան ետին մասը դուրս չգալ կոպից և ոտներն անխի տակ չմնան: Ամոլի լծի ծալրերը գրեթէ ուղիղ են լինում. այդ նրա համար է, որ եղը լուծը քաշելիս հեշտութեամբ մանի նրա տակ, որովհետև սալլին լորխած լուծը ազատ չէ, որ վեր բարձրացնեն և եղան ուսին դնեն:

Դ. ՉՈՐՈՑԻ ԼՈՒԾ.

Չորոցի լուծն աւելի երկար է լինում և բարակ. նրա ծալրերը դէպի ներքև են ծռւած. այդպէս ծռւած լինելը նրա համար է, որ չորոց լծուած դեռ անվարժ արջառները չծռուին, լծից դուրս չգան:

Լծի ւն մասը (ուս 5), որին եղը ուսը դէմ է տալիս քաշելիս՝ փոքր ինչ բարձր է լինում և կոկած: Այդ բարձր տեղի կողքերից (տարածութիւնն է 5—6 վ.) անց են կացրած լինում սամիները:

Լծի ուղիղ մէջ տեղում ամրացնում են 2 նեցուկ. այդ նեցուկները կոչւում են փքի (Ժ) կամ ուղի (Ժ) (4). այդ փքիների միջից են կապում չղթան, կամ լորխում սալլն ու արօրը *):

Նզների լծերի սամիները լինում են ճկուն փալտից, որոնց գլուխները կտմալ լինելով դէմ են առնում ծակին **):

*) Նթէ պատահում է, որ լծուած զոյգի մէկը միւսից աւելի ուժեղ է լինում՝ փոկի մի մասը ձգում են ուժեղի կողմը, հետեալէս և ծանրութեան մասն այդ կողմում շատանում է:

**) Սամի շինելու համար փալտը դնում են կրակի մէջ, փափկացնում, ապա ծռում, աղեղաձև դարձնում, ներքին ծալրին փոսիկ (քեառթ. թ.) շինում և ներսի սամուց սամոտան կապում:

Սամոտան մանում են եղան պոչի փնջի մաղերից: Նզան պոչի փունջն իւրաքանչիւր տարի ձմեռանը կտրում են. այդ մաղերը լուծնում են, սանտրքում, ապա լակտանով (թ.) ոլորում. այդ ոլորածն երեք տակ են անում, սամոտայ դարձնում:

Սամոտալի մի ծալրը պինդ հանգոյց են անում, սամու ծալրին որոշ տեսակով ամրացնելու համար, միւս ծալրին փունջ կապում, որ շինած է լինում բրդի թելերից: Սամոտան կարող է դիմանալ 3—5 տարի:

Ձեւ 16. նկ. I.

Սույն 16 ձևով ցոյց տուած, թէ ինչպէս են արօրը լորխում լծին և կապում հորիկի շղթան:

Ա. Գուլթան. նկար II.



Գուլթանը հերկելու ամենակարևոր գործիքն է. երբ արտը խիստ ամրացած է լինում, կամ հարկաւոր է կուսական հողը (խամ թ.) վարել արտ դարձնելու համար, որի մէջ լիքն են լինում իրար հետ հիւսուած խոտերի արմատներ, գործ են ածում գուլթանը, որի համար արօրն անցօր է:

Գուլթանն արօրից աւելի խոր է փորում:

Արօրը միմիայն պատուում է գետինը, իսկ գուլթանը հողի շերտն ամբողջովին դարձնում է հակառակ կողմի վրայ, մանաւանդ խամ տեղ վարելիս, ուր մի ակօսի ալաւը թ.—շերտը, (չկտրատուած հողի դուր) ծալւէ ի ծալը կազմում է ժապաւէնի նման մի բան, որ հակառակ կողմի վրայ դարձած, պառկած է նախաւերջին ակօսի մէջ:

Գուլթանի ձեւիչը, որ ուղղահայեաց և փոքր ինչ դէպի առաջ թեքուած դիրք ունի, կտրում է հողը խամ տեղից ալնքան, որքան խոփը պէտք է կտրէ, բարձրացնէ տակից հորիզոնական ձևով. երբ ալք կերպով կտրւում է հողը՝ անցնում է թրի հետ կապած, երկու, միմեանց վրայ դրած 11, 12 տախտակներին (որոնք կոչւում են ալաւ-թախթասի և չիմ-դաւրան, ալսինքն ալաւի տախտակ և չիմ դարձնող). վերջիններս հեռացնում են ալաւը փորած ակօսից և պառկեցնում միւս (նախաւերջին) ակօսի մէջ:

Գուլթանի հերկի սգործն սկսում են արտի մէջ տեղից, կամ երկու ամերից: Մէջ տեղից սկսելու համար մաճկալն արտի լաւնութիւնը չափում է, թէ քանի աստում (թ.) (մեծ քալը) է, ապա բաժանում 2-ի, և ալքալիսով իմանում սգործն սկսելու տեղը: Եթէ սգործն մէջ տեղից է՝ գուլթանը մէկ մի կողմից է վարում, մէկ միւս կողմից և քանի գնում՝ վարելով դէպի ամերն հեռանում իսկ եթէ ամերիցն է՝ քանի գնում մօտենում է և վերջապէս հասնում մէջ տեղին:



Գուլթանի մաճը բռնող մաճկալը սովորաբար նստած է լինում չիմ-դաւրան (թ) տախտակի վրայ, որի վրայ շինած է լինում

բռնելու տեղ, ծակ. երբ ակօս ձգելով հասնում է արտի ծալրը և գութանը հարկաւոր է հողից հանել՝ բաւական է, որ չի մ-դ աւ բանի ծակից շրջէ դէպի ձախ՝ իսկոյն գութանը դուրս է գալիս և կողքին քարշ գալով գնում մինչի միւս նոր ձգելիք ակօսը. այդ ժամանակամիջոցում մանկալը սրբիչը (14) ձեռին մաքրում է գութանի սրակը:

Մանկալը գութնի մանին շատ քիչ անգամ է ձեռ. տալիս, այն ևս ուղղութիւնը պահպանելու համար:

Մաներից մէկը, որի վրայ հագցրած է լինում էշը (1) կոչւում է էգ ման 8. իսկ միւսը՝ որձ *) ման (8). երկու մանի տակին լինում է մի նեցուկ կամ կցուկ, որ կոչւում է իւմակ (թ). իւմակի երկարութիւնից է կախուած լինում ակօսի լայնութիւնն ու նեղութիւնը. ակօսն ունենում է մօտ 1. արշ. լայնութիւն, 8—10 վերշ. խորութիւն:

Եթէ ցանոցին կամ հերկոցին արօրները լծում են լուսը բացուելու պէս՝ գութնոցին գութանը լծում են լուսու-աստղը (Արուսեակ) դուրս գալու պէս, հովին. որովհետեւ ցերեկը շոքին այնքան զործ անել չի լինիլ, ուստի աւելի շատ ժամանակ են տալիս գրաստներին հանգստանալու:

Գութանը ծալրից չի կարելի լորիսել լծին, ինչպէս արօրը, դրա համար լարմարեցրած է մի գործիք, որ կոչւում է գռնէլ, որի ծալրը լորիսում են քաշող առաջին զուգ եղների լծին:

Գռնէլի մի անիւը (փետրով 3) բարձր է լինում, միւսը (բուղա թ. 4) ցածր. փետրովը գնում է ակօսի միջով, բուղէն թ. չվարած տեղի վրայով, այդ իսկ պատճառով էլ գռնէլի սեռը հորիզոնական ուղղութեամբ մնալով՝ իւր վրայ է կրում գութանի շուղէն (1):

Գութանի շուղէն ջամբարէքով (թ.) (15) կապում են գռնէլի ծակով (11) անցկացրած երկար երկաթին, որի ծալրից ձգւում է գութանի երկար շղթան. այդ շղթայի վրայ շարոււմ-լծում են 9—12 լուծք եղ ու գոմէշը:

Գութանին լծած 9—12 լուծք եղ ու գոմէշը ունին իրենց անունները—1 և 2 զուգը գռնէլ, 3 և 4 զ. սարիղալիշ (թ.), 5 և 6 զ. զարաղալիշ (թ.), 7 և 8 զ. գղճի, 9 և 10 զ. փլաւճի, 11 և 12 զ. չալխաճի (թ.):


Ընդհանրապէս գռնէլի և սարիղալիշի երկրորդ զուգերը լինում են գոմէշ լծած:

Իւրաքանչիւր 2 զուգը գրաստին կառավարում է մի հօտաղ. ամենից դժուարը գռնէլ քշողի գործն է, որից կախուած է ակօս շատ կամ սքիչ վերցնելը, լծկանին զօր տալը կամ հանգիստ պա-

*) Նկարի մէջ սխալմամբ գրած է որ-ց.

հելը, և որ գլխաւորն է գութանը քարին դէմ առած ժամանակ կոտրուելուց պահպանելը: Այդ պատճառով գոնէլը քշում են հասակաւոր մարդիկ. երկրորդ տեղն իւր դժուարութեամբ բռնում է չալխաճու գործը. երբ ակօսը վերջանալու մօտենում է, չալխաճին պէտք է ակնպիսի կիսաշրջան կազմել տալ 9—12 լուծք եզ ու գոմէշին, որ թէ պտուղը կազմեն, թէ գութանը քաշեն, և թէ հերկի դիմացն եղած ցանած արտը չընկնին:

Գութանի շղթան, որ ձգուած է լինում 9—12 լուծք եզ ու գոմէշի միջով, անմիջապէս չի միանում նրանց լծերի հետ, այլ իւրաքանչիւր մի զոյգն առանձին փոկով միացած է լինում ընդհանուր շղթայի հետ, բացի չալխաճուց 2-րդ գ. գոնեկից 1-ին գ.



Գութանի շղթայի տեղ հնումն աւելի գործածական է եղել երկար փոկ, մօտ 10 սաժէն երկարութեամբ, հիւսուած 30—40 բաբակ սըրմեերից. բաց ալժմ ալդ գրեթէ հազուադիւր է:

Գութանի շղթան ձմեռը պահում են տան կամ մարագի սիւնին փաթաթած, տակից մինչև առաստաղը:

Ալժմ Զաւախքում շատ քիչ ընտանիքներ կան, որ սգութանը տանից լծեն. իւրաքանչիւր մեծ գիւղում 1—2 հատ:

Գութան լծելու համար մօտ են լինում 2—3—4 ընտանիք, մօտգամ դառնում: Նախելով, թէ մօտգամը քանի լուծք եզ ու գոմէշ է բերել՝ ըստ այնմ ստանում է իւր բաժինը: Սովորաբար սգութանը մի անգամ դառնալուն առնելով մի զոյգ եղան հասնում է մի օրավար, գոմէշին $1\frac{1}{2}$ օրավար. իսկ գութնի վարձ՝ գութնի տիրոջը մաճկլի հետ՝ $2\frac{1}{2}$ օրավար: Իսկ եթէ սգութանը երկու անգամ դառաւ, դրա կրկնապատկելը:

Գութանով կարելի է հերկել միմիայն ամառը, որ քառանկիւնի ձև ունին և քարքարոտ չեն:

Գութանի էլը (1), թուրն (2) ու առատամը (3) լինում են սովորաբար կակալ փաւտից, իսկ մաճները կեշուց, տախտակները հասարակ փաւտից:

Գութանը կոտորում է քարին դէմ առնելուց՝ բկից, ալսինքն թրի կամ ձեկի ծակի տեղից։

Ամեն ուստալ գութան չի կարող կապել (շինել)։ Եղ մեծ, ըստ երեւոթին կոպիտ դործիքն այնքան նրբութիւններ ունի, որ հեշտ չէ կարգի դնելը։ Գութանը կապելու համար վարձ վերցնում են մօտ 10 ր. փող, կամ մի թեթեկով։ Մի գութանն իւր բոլոր սարքով կարծենալ 50—60 ր.։

Գութանի սարքերն են՝ ջամբարէկ (թ.), սբբիչ, խօփ և լուծ։

15) Զամբարէկ (թ.) նկ. II.

Զամբարէկն այն հաստ շղթան է, որով գութանը կոռից (6) կապում են գռնէլին։ Նա սովորական շղթայից խիստ հաստ է լինում և մէջտեղում ունի կեռ, լալն, տափակ երկաթից, որ կոռին անցկացնելու տեղն է։

14) Սրբիչ. նկ. II.

Սրբիչը մեծ մասամբ հոնի փալտից է լինում, ծալրը դրի նըման սրած, կամ դրածն երկաթ անցկացրած։ Սրբիչով մանկալը սրբում-թափում է գութանի սրուկը, երբ ակօսից հանած է լինում։

ը. Գռնէլ, նկ. II.

Գռնէլը ծառայում է նրա համար, որ գութանի գլուխը հանգչի նրա սեռի վրայ, այնտեղից գցեն գութանի շղթան։ Շատ անգամ մի արտից միւս արտը տեղափոխուելիս գութանը բառնում են գռնէլին։

գ. Գութանը կապած գռնէլին, նկ. II.

Այս ձևում ցոյց է տրուած, թէ ինչպէս միացնում են գութանը գռնէլին։

18) Խոփ, նկ. II.

Գութանի խօփն անհամեմատ աւելի մեծ է քան արօրինը, և ուրիշ ձևով, արօրի խօփը փորում-պատում է գետինը, իսկ գութանի խօփը տակից կտրում հորիզոնական ձևով բարձրացնում է վեր։

Ա. Ջղլա (թ.) նկ. III.

Ջղլան արօրի և գութանի մէջ տեղն է բռնում թէ ձեռով, թէ մեծութեամբ և թէ գործածութեամբ։

Ջղլան գործ են ածում հերկելու համար. նրան լծում են 4—6 լուծք եղ, կամ 1 զօլդ գռմէշ, 3—4 լուծք եղ և հերկում այնպիսի արտերը, որ պինդ են, արօրի համար անլարմար. քարքարոտ՝ գութանի համար անլարմար։

Սրա առատամի դմակը (8) կամ չաթ ալ (թ.) (ճեղքուած) է լինում, կամ խիստ լալն, որպէսզի ակօսը լալն բաց անէ։

Ջղլան ունի իրեն համար գռնէլ դ, նկ. III, ինչպէս գութանը, միայն ան տարբերութեամբ, որ գութանի գռնէլի անխներն անհաւասար են, իսկ սրա փեւրովներն (3) իրար հաւասար:

Սրա խոփն արօրի խոփի ձևն ունի, միայն աւելի հաստ է լինում և 2—3 վերջ. աւելի երկար:

Ջղլալի էշը, առատամբ, թուրը լինում են ամուր՝ կակալ փայտից, իսկ մանը կեչուց:

Բ. Ջղլայի միւս տեսակը՝ գ. արօնայ կամ յարօնայ նկ. III.

Արօնան կամ յարօնան նոյն պաշտօնն է վարում ինչ որ արօրը, միայն արօնան աւելի բարդ է և աւելի խոր է փորում գետինը, քան արօրը:

Արօնան, կարելի է ասել, այժմ բոլորովին գործածութիւնից ընկած է:

Արօնալի դմակը շատ անգամ չաթալ է լինում, երբեմն էլ ուղիղ. չաթալ դմակն (ինչպէս Ջղլալինը) ծառայում է լաւն աղօս բաց անելու համար:

Արօնան լծում, գործածում են նոյն կերպով, ինչ կերպով արօրը, միայն սրա չորոցի շղթան կապում են բկից մի փոքր հեռու գտնուած նեցուկից:

Արօնալի խոփը, փայտը նոյնն են, ինչ որ արօրինն, և նոյն մեծութեամբ:

Թարօնալի միւս տեսակը տես նկ. I (սխալմամբ ընկած):

Դ. Ջղլայի գռնէլ. նկ. III.

Ջղլալի գռնէլը ծառայում է նրա համար, որ Ջղլան իր շուգալով հանգչի նրա սեռի վրայ (ինչպէս գութանը) և միացուի ջամբարէկով:

Ջղլալի գռնէլի շուղէն մի ձողով է ամրացրած լինում սեռին:

Ջղլալի լծելու կարգն ու սարքը նոյնն են, ինչ որ գութանինը, միայն աւելի փոքր ծառայով:

Ա. Փոցիս նկ. IV.

Փոցիսը մի ահագին գործիք է, որ գործ է ածում ցանոցին արօրի փոխարէն ան տարբերում, ուր արօրն անգոր է, այսինքն, երբ արտը խամ է, նոր հերկած մի անգամ գութանով և հողը դեռ հիւսուած — պինդ է բոյսերի ու խոտերի հազարաւոր արմատներով, այդ պատճառով լծում են փոցիսին 4—6 լուծք եղ ու դոմէշ, մի քանի հողով կանգնում վրան և ատամներով (2) փորում արտը, կամ ճիշտն ասած չանկաւում խամ հերկի երեսը, հացահատիկները մի կերպ հողի տակ թաղում:

Վարելու փոցիսի ատամները (2) լինում են կամ սոսկ փայտից

(կակալ) կամ թէ չէ նրանց վրայ հազցրած է լինում սուր, սեպա-
ձև երկաթ:

Խամ հերկերը միայն մի անգամ (առաջին տարին) են վարում
փոցխով, երկրորդ տարին վարում են արօրով, երբ արդէն հողի
միջի արմատները փտած են լինում և հողը փափկացած:

Մի փոցխով մի օրում այնքան կարելի է վարել, որքան 3—4
արօրով միասին:

Փոցխի քաշողները (3) շարժական են. սալլին բառնալիս, ար-
աւ տանելիս այդ քաշողները հանում են: Փոցխի փախըլը լինում է
պինդ և ծանր:

Բ. Տափանի նկ. IV.

Յանոցին երբ արտը վարում—ցանում են, արտի երեսը խորդ-
ուբորդ, դերբուկներով ծածկուած է լինում. հարթելու, տափելու,
իրենց լեզուով առափնելու համար գործ են ածում տափանը:
Տափանին լծում են 2—3 լուծք եզ ու գոմէշ և սկսում հարթել:
Տափանի վրայ անցկացրած, հիւսած են բաղձաթիւ ձկուն և դիմաց-
կուն ոստեր (ցախեր 7): Տափանի քաշողներն էլ նոյնն են, ինչ որ
փոցխինը:

Տափանը որպէս զի ծանր լինի և աւելի լաւ հարթացնէ վարած
արտի դերբուկները, բացի մաճկալից նրա վրայ կանգնում են և
ուրիշ միջանի հողի, կամ բառնում են քարեր:

Գ. Տուփի նկ. IV.

Տուփի վրայ մի ցախ անցկացրած: Այդ ձևով հիւսում են միւս
ցախերը:

Ամեն գիւղացի տափան (նոյնպէս և վարելու փոցխ) չէ ունենում.
չունեցողը վերցնում է դրացուց առանց որ և է վարձի:

Բ. ՀՆՁԵԼՈՒ և ՀԱԽԱՔԵԼՈՒ

Գ. Գերանդի (գերնդի ժ.) նկ. X.

Գերանդիով հնձում են արտ, չալիբ (թ.) (խոտատեղ), արօս.
Գերանդին շատ ժամանակ չէ, ինչ մտել է գործածութեան մէջ.
առաջ աւելի գործածականն եղել է մանգաղը:

Գերանդու առաւելութիւնն այն է մանգաղից, որ սա արտը
հնձում է (կտրում է, տակից, որ և դարման աւելի շատ է դուրս
գալիս, բայց միւս կողմից էլ որանը գետին թափուելիս բաւակա-
նին քանակութեամբ հացահատիկ է դուրս կորզւում հասկերից, իսկ
մանգաղն ազատ է ալս վերջին վնասից. սակայն սա էլ արտն երե-

սանց հնձելով՝ բաւականին քանակութեամբ դարման է կորցնում:

Առաջներումը (ինչպէս ալժմ Շիրակում) հնձած որանը կապում են եղել խուրձեր, խուրձերից կազմում բարդեր. (30 խուրձը մի բարդ է), ալժմ Զաւարսքում ալդ չկայ. ալլ հնձած լասից (թ.) կազմում են փուլալ կամ հուպուլ (փոքրիկ գէղ), ապա հաւաքում 15—20 փուլալը մի տեղ, կազմում բոլորածն գէղ, որ կոչւում է *եղըն*: Մի եղընը մի որանի սալլ է, այսինքն մօտ 50 պ.:

Հնձում են այսպէս. երիտասարդն առնում է գերանդին և օն բանալով հնձում է. (օնը թևի շարժումածքի բացուածք է՝ մօտ 1 սաժ. լայնութեամբ 40—50 քալլ երկարութեամբ): Մի օնից դուրս է գալիս մի լաս. լասը եղանով հաւաքում, փուլալ են շինում. (լաս բաժն արտի 2 լասը մի փուլալից աւելի է, իսկ վատ բաժն արտի 3—4 լասը հազիւ մի փուլալ կազմէ), ապա փոցխուորը (ժ.) փոցխը ձեռին փոցխում է տարած լասի տակ մնացած որանը:

Գերանդին սրելու համար գործ են ածում ղլաւի՝ խարտ, էրս, չաքիւն:

Գ. Ղլաւի. թ. նկ. X.

Հնձողն երբ մի օն վերջացնում է և պատրաստում է սկսելու. միւս օնը՝ սրում է գերանդին մի տեսակ քարով, որ կոչւում է *խարտ*: Խարտը որպէս զի գերանդու բերանը չփխացնէ՝ դնում են մի փոքրիկ ամանով ջրի մէջ, որ կոչւում *ղլաւի* (թ.). (իսկ ամանով միասին՝ մասաթ).

Ե. Էրս (թ.) 2. Հաքիւմ (թ.) նկ. X.

Սրը գերանդու բերանը շատ հնձելուց ջարդում, փճանում է, ծեծում են, օնոր բերան են հանում. հնձողն առնում է էրսը, գերանդու բերանը դնում նրա վրայի պողպատացրած երկաթին, մուրճով (չաքիւնով) զգուշութեամբ նոր բերան հանում. դրան ուրիշ կերպ ասում են *սգերընդին չաքենլը*:

Գերանդու բոււր (ժ.) (էլճակ թ.) կոթի վրայ պիտի լինի այն բարձրութեան ամրացրած, ինչ բարձրութիւն ունի հնձողը գինից մինչև գօտկատեղը, որպէսզի վեր առած օնը համահաստար ծանրութիւն-գծուարութիւն ունենայ հնձողին, որովհետեւ բոլի բարձր կամ ցածր լինելուցն է կախուած օնի մեծ կամ փոքր (նեղ կամ լայն) լինելը: Ազդէս էլ գերանդու բաց կամ գուր լինելուց է կախուած որանի շատ կամ քիչ քանակութեամբ հնձուիլը: Բերանի (գանակի) քիթը պէտք է շառաւիղաձև բոլից ալնքան հեռաւորութիւն ունենայ, որքան ներքեի մասը:

Ե. Մանգաղ նկ. X.

Մանգաղները լինում են երկու տեսակ, մէկը հնձելու, սուր բերանով, որ աւելի մեծ է, միւսը առանց բերանի (գանակի) կեռ

երկաթ, խոտ, որան հաւաքելու, խուրձ կապելու համար, կամ խոտ-նոցից (մեծ լեռնաձև դէղ) խոտ քաշելու:

Այժմ հնձելու մանդաղը Ձաւախքում գործածութիւնից ընկել է, և կարելի է տեսլ սակաւ կճարուի. իսկ միւս մանդաղը գրեթէ ամեն տուն ունի:

Ը. Կուժ, նկ. X.

Քաղոցին ու հերկոցին դաշտերում երբ ջրի սակաւութիւն է, աղբիւրները չորանում են, գիւղացին հեռը տանում է տանից ջրի պաշար մի փալտէ փորած ամանով, որ կոչւում է կուժ. կուժը ծածկուած որոնով կամ չլերով ջուրը երկար ժամանակ հով է պահում և համը չի փճացնում: Կուժը միջից փորուած է, իսկ տակի ծակը կոշոր տախտակով փակած. վերի մասում ունի մի մեծ բերան (2) (մէջ տեղում), որով ջուր են լցնում, իսկ միւս ծալրի փոքր բերանով, լիւլիւկով (3) (թ.) խմում:

Գ. Փայտէ նղան. նկ. IX.

Փայտէ եղանները լինում են ըստ մեծի մասին 2 մատնանի: Փայտէ եղանը գործ է ածւում որանը (լասը) հաւաքելու, փուլուլ շինելու համար, կալը չրջելու համար (քանի դեռ նա խոշոր է և թիւ չէ ընկել) խոտն ու որանը սալին բառնալու համար:

Դ. Երեք-մատնանի նղան նկ. IX.

Նոյն ծառայութիւնն է մատուցանում, ինչ որ երկու-մատնանին:

Ե. Երկաթէ (երկթէ ժ.) նղան նկ. IX.

Երկաթէ եղանով որանի սալը բառնալիս կամ դէզ շինելիս որանը կամ խոտը վեր են տալիս: Երկաթէ եղանի կոթն աւելի երկար է լինում:

Զ. Փոցխ նկ. IX.

Փոցխով ջահէլ հարսը, ազապ աղջիկը կամ ծերուկը փոցխում են արտը, ալսինքն քաղութրից լետով երբ եղընուորը լասը տանում, փուլուլ է շինում՝ լասի տակից մնացածը հաւաքում են փոցխով: Փոցխը գործ են ածում նաև կալի եզերքները վրայ ձգելիս, պաւմանների *) կոշտերն (աթարի մանրունք) հաւաքելիս:

Նղաններն իրենք գիւղացիները չեն շինում, մեծ մասամբ առնում են զրսից. իսկ փոցխը իրենք են շինում, փոցխի գլուխը լինում է ամուր փայտից, իսկ պոչը՝ հասարակ:

Ժ. Կէտեր կամ նետեր նկ. IX.

Երբ ուզում են չորացած փուլուլները մօտ անել սեղըն դնելու, փուլուլի տակից գետնի երեսով անց են կացնում կէտերը և երկու

*) Քակորի շերտ:

մարդ մէկն առաջից, միւսն ետեւից բարձրացնում են երկու ձեռներով նետերի վրայ նստած փուլուլը, տանում եղըն զննելու տեղը։

Կէտերը լինում են հասարակ փախտից։

Է. Մանգաղ. նկ. X.

Մանգաղն (առանց սուր բերանի) ալժմ խիստ քիչ գործածութեան մէջ է. առաջ երբ խուրձ կապելը կար՝ դա խիստ գործածական է եղել։

Գ. ԿՐԵԼՈՒ

Ա. Կոռնի սալլ, նկ. IV.

Կոռնի սալլը գիւղացու ամենակարևոր գործիքն է. կոռնի սալլը գործ են ածում ամեն ժամանակ թէ դաշտալին և թէ տնային պարապմունքների ժամանակ. ցանոցին կոռնի սալլին բառնում են սերմնացուն, կենդանիների կեր (պաշար) խուրձերով խոտը *), շատ անգամ արօրը. քաղցին նրա վրայ բառնում են բոլոր գործիքները, կժով կամ տակառով ջուրը, իրենք էլ նստում վրան և գնում քաղը. հերկոցին բառնում են գութանն իւր բոլոր սարքով (բացի զոնէլից), կալոցին հացը կալից կրում են տուն, բնազոնը տանում ջրաղաց, ալիւր, ջրաղացից բերում տուն. բացի այդ՝ նրա վրայ ամառը նստում՝ ուխտ, հարսանիք, հրաւէր են գնում գիւղից գիւղ. նրանով կրում են շինութեան համար անտառից փայտ, դաշտից քար, քրէ՛ն տանում զանազան տեղեր, կաղզուանից աղ բերում, քաղաքը աթար, փայտ, ալիւր, աղ և ուրիշ բաներ տանում ծախելու և ալլն։

Կոռնի սալլն այնքան կարևոր գործիք է գիւղացու համար, որ չնայած նրա թանգ նստելուն՝ գրեթէ ամեն տուն ունի։


Սրբ կոռնի սալլի վրայի բեռը շատ է լինում՝ նրան բացի ամուլից լծում են մի զուգ եղ էլ առաջից, որ կոչւում է չորոց (չորիկ)։

Կոռնի սալլն երբ գործածութեան մէջ չէ՝ արևից պահում են չարտախի տակ, որ չիվանալ, իսկ անիւները տան բակում (նախասենեակ)։

Որպէս զի անիւներին խիստ միացրած սեռը հեշտութեամբ պտուղտ դալ բարձերի (14, տակ՝ գնացած ժամանակ սապոնում են, որի համար մշտ պատրաստ քաշ արած է լինում սալլի ասեղի մօ-

*) Ցանքի ժամանակ լծկանին չեն թողնում սկանալն ընկնելու (նոր խոտ արածելու), որովհետև նոր բաւած խոտը նրանց նիհարացնում է և թուլացնում։

24 IV $\frac{1}{36}$




a.



b.

ա. փայտ 5ւ. 2) արած (արած) 12 հարց. 14 ղ. 3) փայտ 4ւ. 8 ղ. 4) փայտ (արած) 12 հարց. 14 ղ. 5) փայտ 4ւ. 8 ղ. 6) փայտ 4ւ. 8 ղ. 7) փայտ 4ւ. 8 ղ. 8) փայտ 4ւ. 8 ղ. 9) փայտ 4ւ. 8 ղ. 10) փայտ 4ւ. 8 ղ. 11) փայտ 4ւ. 8 ղ. 12) փայտ 4ւ. 8 ղ. 13) փայտ 4ւ. 8 ղ. 14) փայտ 4ւ. 8 ղ. 15) փայտ 4ւ. 8 ղ. 16) փայտ 4ւ. 8 ղ. 17) փայտ 4ւ. 8 ղ. 18) փայտ 4ւ. 8 ղ. 19) փայտ 4ւ. 8 ղ. 20) փայտ 4ւ. 8 ղ. 21) փայտ 4ւ. 8 ղ. 22) փայտ 4ւ. 8 ղ. 23) փայտ 4ւ. 8 ղ. 24) փայտ 4ւ. 8 ղ. 25) փայտ 4ւ. 8 ղ. 26) փայտ 4ւ. 8 ղ. 27) փայտ 4ւ. 8 ղ. 28) փայտ 4ւ. 8 ղ. 29) փայտ 4ւ. 8 ղ. 30) փայտ 4ւ. 8 ղ. 31) փայտ 4ւ. 8 ղ. 32) փայտ 4ւ. 8 ղ. 33) փայտ 4ւ. 8 ղ. 34) փայտ 4ւ. 8 ղ. 35) փայտ 4ւ. 8 ղ. 36) փայտ 4ւ. 8 ղ. 37) փայտ 4ւ. 8 ղ. 38) փայտ 4ւ. 8 ղ. 39) փայտ 4ւ. 8 ղ. 40) փայտ 4ւ. 8 ղ. 41) փայտ 4ւ. 8 ղ. 42) փայտ 4ւ. 8 ղ. 43) փայտ 4ւ. 8 ղ. 44) փայտ 4ւ. 8 ղ. 45) փայտ 4ւ. 8 ղ. 46) փայտ 4ւ. 8 ղ. 47) փայտ 4ւ. 8 ղ. 48) փայտ 4ւ. 8 ղ. 49) փայտ 4ւ. 8 ղ. 50) փայտ 4ւ. 8 ղ. 51) փայտ 4ւ. 8 ղ. 52) փայտ 4ւ. 8 ղ. 53) փայտ 4ւ. 8 ղ. 54) փայտ 4ւ. 8 ղ. 55) փայտ 4ւ. 8 ղ. 56) փայտ 4ւ. 8 ղ. 57) փայտ 4ւ. 8 ղ. 58) փայտ 4ւ. 8 ղ. 59) փայտ 4ւ. 8 ղ. 60) փայտ 4ւ. 8 ղ. 61) փայտ 4ւ. 8 ղ. 62) փայտ 4ւ. 8 ղ. 63) փայտ 4ւ. 8 ղ. 64) փայտ 4ւ. 8 ղ. 65) փայտ 4ւ. 8 ղ. 66) փայտ 4ւ. 8 ղ. 67) փայտ 4ւ. 8 ղ. 68) փայտ 4ւ. 8 ղ. 69) փայտ 4ւ. 8 ղ. 70) փայտ 4ւ. 8 ղ. 71) փայտ 4ւ. 8 ղ. 72) փայտ 4ւ. 8 ղ. 73) փայտ 4ւ. 8 ղ. 74) փայտ 4ւ. 8 ղ. 75) փայտ 4ւ. 8 ղ. 76) փայտ 4ւ. 8 ղ. 77) փայտ 4ւ. 8 ղ. 78) փայտ 4ւ. 8 ղ. 79) փայտ 4ւ. 8 ղ. 80) փայտ 4ւ. 8 ղ. 81) փայտ 4ւ. 8 ղ. 82) փայտ 4ւ. 8 ղ. 83) փայտ 4ւ. 8 ղ. 84) փայտ 4ւ. 8 ղ. 85) փայտ 4ւ. 8 ղ. 86) փայտ 4ւ. 8 ղ. 87) փայտ 4ւ. 8 ղ. 88) փայտ 4ւ. 8 ղ. 89) փայտ 4ւ. 8 ղ. 90) փայտ 4ւ. 8 ղ. 91) փայտ 4ւ. 8 ղ. 92) փայտ 4ւ. 8 ղ. 93) փայտ 4ւ. 8 ղ. 94) փայտ 4ւ. 8 ղ. 95) փայտ 4ւ. 8 ղ. 96) փայտ 4ւ. 8 ղ. 97) փայտ 4ւ. 8 ղ. 98) փայտ 4ւ. 8 ղ. 99) փայտ 4ւ. 8 ղ. 100) փայտ 4ւ. 8 ղ.



Ն 4. $V' \frac{1}{24}$




ա. քանիս ասյլ. 2) քանիս 5 ա. 8 զ. 3) անիւ 1 ա. 4 զ. 4) օխ 2 ա. 10 զ. 5) Կոշիկ. 6) անգիւսի փայ. 8 անգ.
 7) Եղիւի փայ. 1 ա. 11 զ. 8) Ժամբակ (10). 9) Թիւր, փայտեղի 5 ա. 8 զ. 10) Գլուխ. 11) Թառ 2 ա. 6 զ. 12) Գիւղ. 10 զ. 13) Իւրեղ
 1 ա. 13 զ. 14) Բարձր. 1 ա. 6 զ. 15) Կարմ. 11 զ. 16) Կարմ. 10 զ. 17) Կարմ. 12) 14 զ. 18) Կարմ. 8 զ.
 19) Կարմ. 10 զ. 20) Կարմ. 10 զ. Բ. ասյլը Լոբաւն շինն. Գ. արձալի Լոբաւ. Կ. Կարմ. II.:




1) Խառնիկ սայլ 7ս. 11զ. 2) Բաւի 3) Եւթիւ 4) Կտ 3ս. 5զ. 5) Բաւի, Բաւի 7ս. 11զ. 6) Եւթիւ Կոպ. 3ս.
 7) Կտ Կոպ. 3ս. 3զ. 8) Բաւ 4ս. 5զ. 9) Կիւ 1ս. 4զ. 10) Գտ Եւթիւ (Բ). 11) Կաւի 12) Կաւ. 13) Բաւ
 14) Կոպ. 15) Կաւ. 16) Կաւ. 17) Կաւ. 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17.

[illegible]



ա. 4. 4. 4. 4. (խառն թ.) 1) թիւեր 2. 5. 2) խառն (խառն թ.) 1. 8. 3) թիւ 14. 4) խառն թիւ
 4. 5) խառն թ. 11. 6) խառն թ. 13. 7) խառն թ. 10. 8) խառն թ. 10. 9) խառն թ. 10.
 2) խառն թ. 10. 3) խառն թ. 1. 4) թիւ. 5) խառն. 6) խառն. 7) խառն. 8) թիւ 1. 9) խառն.



առ. 172 թի. 1) թափ 10-15 լ. 2) պոչ 1մ. 12 լ. Բ. թեփ թի. 1) թափ 10 լ. 2) պոչ 1մ. 8 լ. Գ. փայտե
 հան 3մ. 1) խոյ 6 լ. 2) պոչ 2մ. 10 լ. Զ. երկ-հայտնի հան. Է. Խոյաթի հան 1) խոյ 4 լ. 2) պոչ
 2մ. 10 լ. Ը. փայտ 3մ. 8 լ. 1) խոյ 3 լ. 2) պոչ 1մ. 3) պոչ 4) խոյ 1մ. 4 լ. Ե. Խոյի 1մ. 4 լ. 1) խոյ 3 լ. 2) պոչ 3 լ. 3) Կ-Բ.
 Ը. Խոյի 3-4մ. 1) խոյ 3 լ. 2) պոչ 1մ. 4 լ. 3) խոյ Բ. Խոյ 1) խոյ 3 լ. 2) պոչ 2մ. 3) Կ-Բ. Ը. Խոյի 4մ. 8 լ.

տից ստացան լուղը (թ.) (20), մէջը ստացն ջրով լցրած, իւր թիակով՝ Ստպոնլուղը լինում է գոմէշի պողից, բերանին փալտից շինած կափարիչ:

Կոռնի սալլի տալաղը (թ.) (18), նրա համար է, որ սալլի գլուխը բարձր մնալ և հեշտ լինի լծել:

Սալլի գլխից մինչև առջևի կոպը կոչւում է եղնոց. ալդ եղնոցը եղան կամ գոմէշի երկարութեան է լինում:

Սալլն ինչպէս և դռթանն աճեն ուստայ չի կարող կապել. պահանջում է բաւականին նրբութիւն:

Կոռնի սալլը շինում են իրենք գիւղացիները բացի անխնե-րից, որ առնում են քաղաքից պատրաստի:

Կոռնի սալլը շինում են հասարակ մալրի կամ եղնի փալտից. բացի սեռից, անխնեից ու բարձերից, որոնք լինում են աւելի ամուր և գիմացկուն փալտից:

Կոռնի սալլով գիւղացին կդնալ մի ժամում 3—4 վերստ, ոչ աւել:

Բ. Սալլը լորխած լծին նկ. V.

Այս ձևում ցուց է տուած, թէ ինչպէս են լորխում լուծը փռկով, զրա նման և լորխում են արօրը կանուխից:

Որանի (օրնի Ժ.) սալլ. նկ. IV.

Որանի սալլը շատ աւելի մեծ է, քան կոռնի սալլը. սրանով հնձի ժամանակ խոտն ու վարսակը (ուլաֆ թ.) կրում են խոտատեղից ու արօսից խոտնոցը, քաղցին ցորենը, գարին, հաճաքը (գիւղիկ թ.) կտաւհատը կրում են արտերից կալը:

Սրան լծում են ընդհանրապէս երկու զուգ եղ (ըստ մեծի մասին մի զուգը գոմէշ, ալն էլ ամուլը). երբ բեռը խիտ ծանր է լինում կամ ճանապարհը զառվերներով, քարքարոտ, դերբուկներով ծածկուած՝ լծում 3, երբեմն էլ 4 զուգ:

Սրա թափքը ծածկած չէ լինում տախտակներով (ինչպէս կոռնի սալլինը), և կարիք չկալ, քանի որ խոտն ու որանը նրա վրալի զարսած 3—4 ճաղերի (ձողերի) արանքից ներքև չեն թափւում:

Սրա ցցերն աւելի երկար ու մեծ են լինում, ծալբերն էլ սուր, որպէսզի որանն ու խաղը հեշտութեամբ նրա վրալ նստի, մնալ:

Կոռնի սալլի ցցերն անց են կենում թառերի մէջ, իսկ որանինը՝ միմիայն ետևի ցցերն են ալդպէս, իսկ առջևի ցցերի մէջ մտնում են թառերի ծալբերը:

Սրա անխնեները նոյն բարձրութիւնն ունենն՝ ինչ որ կոռնի սալլինը, միայն սրա սեռն աւելի երկար է լինում և հաստ. տես նկ. VII,

Տուն կալ որ ունի մինչև 3 հատ որանի սալլ. տուն էլ կալի իսկի չունի. չունեորն ետլա է գնում ունեորից վերցնելով:

Զնայելով, որ որանի սալին աւելի մեծ է քան կոռնի սալլը, սակայն սա աւելի աժան է նւտում:

Որանի սալին բառնում են 40 — 60 պ. որան կամ խոտ, ամուր շերտում (պարանել) որոշ-լայտնի ձևով և ապա լծում գրաստները:

Սա ունի քառոյնների մէջ 3 զիւռակիւ թ. (կցան), կոռնի սալլը՝ մի:

Որանի սալին էլ շինում են նոյն փալտից, ինչ փալտից կոռնի սալլը:

Սրա և կոռնի սալի սարքերն ու մասերը նոյնն են. տես նկ.

ԿII, միմիայն սրա շերտն (պարան) է աւել, որով շերտում են նկ.

ԿI (1.) շերտի մօտ նկարած են ճիւղտներն ու մտրակը:

Մտրակը գործ է ածւում զոմէշներին և չորոցին քշելու համար, երբ վերջինիս ուսին հօտաղ չի լինում, և ամբողջ սալին կառավարում է ամուլի ուսին նստած մարդը:

Ճիւղտները լինում են ճկուն և պինդ փալտից. երբեմն ճիւղտի ծալը սրում են ամտուլը (ժ.) շինում. մօտուլը նրա համար է, որ զանդաղաչարժ եղան մօտուլին (բղեն), որին չեն աղղում ճիւղտի հարուածները:

Սալի մասերը. նկ. ԿII.

Ա. Անիւ.

Անիւ կամ կունտ (ժ.), շինած է լինում ամուր և ծանր փալտից. չորս կողմը հեց հագցրած:

Բ. Գ. Բարձր.

Բարձր քառոյի տակ նրա համար են ամրացնում, որ թափքը բարձր կանգնի:

Դ. Ե. Բարձր լակոտով.

Բարձր սեռին քսուելով երբ մաշւում է, կարկատում են. կարկատանի փալտը կոշւում է լա կոտ (ժ.): Լակոտն երկու տեսակ են ամրացնում բարձրին.—կամ բարձր հարթացնում են մինչև մաշւած տեղը լակոտն ամրացնում են վրան, կամ փարում մէջն անցկացնում:

Բարձր, լակոտը, ինչպէս և ստամները (առկալ ժ.) լինում են ամուր փալտից:

Զ. Սնունք. (սննի. ժ.).

Որանի սալի ստնին աւելի հաստ է լինում և մօտ 12 վերջոյ աւելի երկար:

Հայ գիւղացին սեռի քառանկիւնի զլուխն (5) այնպէս է ամ-

բացնում անխնի, որ վերջինիս հետ ամուր միացած միասին է պտուղտ գալիս բարձերի տակ, այդ պատճառով էլ աւելի զժուար է լինում գրաստների համար քան սեռի վրայ պտուղտ եկող անխառն սալլերը, ինչպէս դուխաբորների ֆուրգոնը, մալականների կաշկան և ավլն:

Սեռերն ընդհանրապէս շինում են կեշի փաւտից:

Գործածելուց երբ անխը թուլանում է սեռի վրայ, շարժում, որի պատճառով և լաճախ անխը ցրիւ է գալիս, պնդացնում են սեպածն տախտակներով, որ կոչւում է սլապո ժ.: Լապը խփում են սեռի և անխի միջի բացուածքի մէջ:

Է. Շղթայ նկ. VII.

Շղթան շատ անգամ նոյն ծառալուծիւնն է մատուցանում, ինչ որ փոկը. նրանով չորոցը կապում են արօրին, սալլին և ավլն. շղթան լինում է զանազան երկարութեան, $2\frac{1}{3}$ —5 արշ.:

Ը. Փոկ նկ. VԻ.

Փոկը *) կաշուց ոլորած ամուր կապ է, որով սալլն ու արօրը լորխում են լծին, դութանի իւրաքանչիւր զորդը միացնում գութանի շղթայի հետ, կամը միացնում լծին և ավլն:

Թ. Մալուխ (մալսի ժ.) նկ. VII.

Փոկի հիւստած ծալրն երբ անց են կացնում միւս հաստ ծալրի ծակի մէջ, լորխում* դուրս չփրթելու համար ամրացնում են մի փոքրիկ ծուռ փաւտով, որ կոչւում է մալ լոխ:

Ա. Սահնակ նկ. VԻԻ.

Սահնակն, ինչպէս իրենք են ասում խղակ (թ.), իսկապէս հարկաւոր էր դարսել տնային գործիքների շարքը, ոչ դաշտային, բայց որովհետեւ բացի առտնին գործածութիւնից ծառալում է և զանազան իրեր կրելու, փոխադրելու համար, ինչպէս կռնի սալլն* ակդ պատճառով դարսեցինք դաշտային գործիքների շարքը:

Սրանով գիւղացին ձմեռը* ջուր է կրում գետակից կամ առազանից (հաւու թ.) (երբ գետը սառչում է և սառուցը ծածկում են տակից ջուր քաշում), հորերից. փաւտ, աթար և ուրիշ իրեր են տանում քաղաք ծախելու, ձմեռը նստում վրան, տեղ են գնում:

Սահնակ պահում են միմիայն մեծ օջաղները:

*) Փոկ շինելու համար վերցնում են մօտ 5 արշ. երկ. 3—4 վերջ. լալն. կաշի. մի քանի ժամանակ դնում աղաջրի մէջ, ապա հանում, մաղը քերում, կակղացնում հասըլ (թ.) շինում ձէթի կամ ճրագուի մէջ, ոլորում երկու տակ անում, իրար հետ հիւստում ու ձգուած կապում երկու սիւնի մէջ մինչև ցամաքիւր, որ ավլ ևս կուշ չգալ, ապա հանում, գործ ամում:

Սահմակը քառոցներից լորխում են լծին և լծում մի զոլգ ա-
րագաշարժ եզ:

Սահմակի թևերը (1) լինում են ամուր փալտից:

Գ. Կ Ա Լ Ս Ե Լ Ո Ւ

Ա. Կալ՝ նկ. IX.

Կամով ծեծում-մանրացնում են կալսուած որանը: Կամին լը-
ծում են մի զոլգ եզ: Լծից կապում են փոկը, անցկացնում առա-
ջին գոտու տակի ծակից, մալուխով ամրացնում, ապա կանգնում են
վրան (մի մարդ) ու քշում: Հարուստ ընտանիքները լծում են 8—15
կամ, միջակները 4—8, աղքատները 1—2 հազիւ: Ամենից առաջ
լծուած զոլգը կոչւում է առջըն կամ, նրանից լետով գնացողները
լետընկամ:

Կամերը լծուած ժամանակ բաժանւում են երկու կարգի. մէկ
կարգը պտուտ է զալիս աջից ձախ, միւսը ձախից աջ:

Երբ նոր փռուած որանի երեսը փոքր ինչ մանրուած-հարթ-
ւում է՝ եղանով կալի *) երեսը դարձնում են. մանրացած մասը
գնում է ներքե, խոշոր մասը բարձրանում վերե, երեսը: Եղանով
չբջում են երբ դեռ խոշոր է, երբ մանրւում է, չբջում են կալի թիով:

Կամը շինում են 2 կտոր պինդ, հաստ տախտակից, գլուխը՝
թեք՝ դէպի վեր, որպէսզի սահնականման կարողանալ առանց ար-
գելքի ման գալ կալի երեսին: Կամի տակն ամրացնում են բազմա-
թիւ սուր կարծր կալաքար **) սև քարեր, որին իրենց լեզուով ա-

*) Կալ կոչւում է գիւղին կից այն տափարակ (կոլորաձև) տե-
ղը, որ ունենում է 5—15 սաժէն տրամագիծ. կալի չորս կողմը
1 արշ. բարձրութեամբ որմնապատ է: Ամենայն տարի նախ քան
որանը կալը կրելը՝ նրա երեսը լարդ են փռում (կլէրդեն ժ.) այդ
լարդը (դարմանը) նստում-կաշում է գետնին, ուստի և չի թողնում
գետնի հողը խառնուելու նոր հատի ու նոր դարմնի հետ: Մի քանի
անգամ կալ անելուց լետով գետնին այն աստիճանի է ամրանում
եզ ու դռմէշի ոտների տակ, որ քարանում, լղկում է:

Որովհետեւ բոլորաձև փռուած որանը կոչւում է ակալ՝ ուստի
տեղն էլ նրանից ստացել է նորն ակալ անունը: Մի կալը լինում
է 100—500 պուդ որանից:

Կտահատի կալը ծեծում են ոչ թէ կամով, այլ կռուի սալ-
լով: Լծում են մի-երկու սալ և ման ածում կտահատի հաշանի վը-
րայ. թափւում է հատիկը, մնում է ճականը թ. (ցողունը):

**) Եփրակում այդ կալաքարի տեղ դործ են ածում կալ-
ձաքար:

սում են կամի քար: Այդ քարերի թիւն հասնում է մինչ 200-ի. ալդ քարերն են, որ կտրատում-մանրացնում են որանը, ծղնօտը հատիկից բաժանում, լարդ դարձնում:

Ա. Կալի թի նկ. IX.

Կալի-թին կամ մեծ-թին համեմատաբար աւելի մեծ է քան թէճի-թին. կալի-թին դործ է ածւում կալը շրջելու *) և լարդը քթոց լցնելու համար:

Գ. Դ. Ե. Եղանները նկ. IX, նույնպէս դործ են ածւում կալը շրջելու և որանը կալսելու համար:

Ը. Կապտոն կամ կալքաշ նկ. IX.

Նրբ կալը ծեծում մանրացնում են՝ կապտոնի ծակերից անց են կացնում երկու շղթայ, որոնց ծակի օղակները դէմ են ընկնում ծակերին. շղթաների միւս ծակերը կապում են լծին, ապա կապտոնի պոչը բռնելու տեղից կապում են մի պարան և ամրացնում լծի հետ. լետոլ լծում են մի զուգ ուժեղ եղ կամ զոմէշ, մի հատակաւոր մարդ բռնում է կապտոնի պոչը, կանգնում կապտոնի վրայ, իսկ մի ուրիշը նստում եղների ուսին ու քշում. ալդպիսով սկալը քաշումն հաւաքում են մի կողմ, թեղ **): դնում:

Որպէս զի կապտոնն աւելի ծանր լինի և տակից հաւաքէ մանրած կալը, նրա վրայ բացի պոչը բռնողից՝ երեսներն հակառակ դիրքով դէպի ետ դարձրած նստում են մի քանի հոգի ևս. մանրած կալը հաւաքւում է կապտոնի առաջ, ամպի նման ուռչում, բարձրանում,

*) Նրբ կալը ծեծում են, մանրացնում և նրա երեսը շուռ տալու համար ալ ևս եղանն անպէտք է դառնում, ալդ ժամանակ սկալը շրջումն են կալի-թիով:

**) Թեղ կոչւում է հատիկն լարդի հետ միացած այն բլրանն երկար կոտը, որ կալը մանրելուց լետոլ կապտոնով հաւաքւում են կալի մի կողմը: Հէնց որ դրուած թեղի հակառակ դիրքով քամին սկսում է փչել՝ գիւղացին առնում է հոսելին ձեռը, կանգնում թեղի գլխին, հոսելով էրնում (ժ.) քամում, հատիկը լարդից շոկում: Եւ որպէսզի թեղի մասը քամու շոկած լարդի հետ յիստանուի՝ թեղի այն կողմը, ուր հաւաքուելու է լարդը՝ դնում են 1 կամ 2 ձող, ալդ ձողերն լետոլ էրնողին ցուց են տալիս ճիշտ սահմանը թեղի ու լարդի: Հատիկն երբ հաւաքւում, բոլորանն բրգանման կոյտ են կապւում, կոչւում են թէճ. Մի թէճը լինում է մի սոմարից մինչև 15 սոմար (նալելով կալի մեծ ու փոքր լինելուն):

Ընդհանրապէս փորձուած է, որ մի որանի սալը գարին տալիս է $1\frac{1}{4}$ —2 սոմար ¹⁾ (20—32 պուգ)՝ հատիկ, իսկ ցորենինը 12 կոգից մինչև 1 սոմար կամ 15 պ.—20 պուգ:

¹⁾ Սոմարը 16 կոգ է: Մի կոգ ցորենը գալիս է մօտ 50 ֆ., իսկ մի կոգ դարին 40 ֆունտ:

ուղում է թախուհլ՝ բալց նստած մարդիկն իրենց քամակներով պահպանում են մինչև տեղ հասցնելը:

Ը. Ցախաւել. նկ. X.

Սրբ բալը կալը կապտոնով հաւաքում են, ալնուհետև առնում են ցախաւելն ու աւլում կալի տակը:

Բացի կալից ցախաւելով աւլում են և ղռները, գոմերը, բակերը, փողոցը: Ցախաւելը կապում են ձկուն և ամուր օստերից:

Թ. Հալ նկ. IX.

Ցախաւելի առաջ հաւաքած կալի տակը քշում—տանում թեղին են խառնում հալով:

Հալ անողը նրա կոթը դէմ է տալիս փորին և սահեցնելով քշում առաջը պատահածը:

Հալի ետևի փոքրիկ անիւները նրա համար են, որ թէք դրութեամբ նրանք զետնի երեսին զլորուեն և հալ անողին հնչառութիւն պատճառեն: Այդ անիւները վերջին տարիներս են աւելացրած, այժմ էլ շատ հալեր անիւ չունին:

Բ. Թէճի-թի նկ. IX.

Թէճի-թին աւելի փոքր է և կոթն աւելի երկար քան կալի-թին: Թէճի-թիով էրնում են, թէճի հատիկները լարդից ու մղեղից (ժ.) (զարմանի մանրունք, փոշի) բաժանում:

Ե. Հոսելի նկ. IX.

Հոսելիով կամ հուսելիով (ժ.) էրնում են թեղը:

Ժ. Մաղ նկ. X.

Մաղերը ^{*)} լինում են զանազան տեսակ և զանազան անուններով, ինչպէս՝ քարմաղ, խախալ, շատուար և այլն: Ղբանցից ամեն մէկն իւր գործածութեան տեղն ունի: Կալոցին, երբ նոր ելած թէճը մաղում են և հատիկը շոկում ծանծից ^{**)} ու կռճոնից՝ գործ է ածում խախալը, իսկ միւսներն աւելի անալին գործածութեան համար են:

Թ. Կող, նկ. X.

Կողն արքունական չափ է, որով չափում են հացահատիկները: 16 կողը մի սոմար է:

^{*)} Մաղերը չինում են հալ բոշաները: Նրանք հաւաքում են հորթի մորթիները, զգում աղաջրի մէջ, հոտեցնում, մաղը վրալից քերում, ապա բարակ սրճիներով դասնաղի (թ.) վրալից հիւսում:

^{**)} Պատահում է, որ չձեռնած հասկեր են մնում թեղի մէջ, ալղալիսի հասկերը թեղըն էրնելուց լետոյ հաւաքում են մի առանձին տեղ և ապա կալը (կալոց) պրծնելուց լետոյ նորից ձեռնում, մանրացնում, հատիկները հաւաքում: Ալղալիսի չձեռնած հասկերի հաւաքածուն կոչւում է ծանծ, կամ ցան: Գարու ծանծն առանձին են հաւաքում, ցորենինն առանձին:

կալ և փոքր զիւրքով, կողի կէս ծաւալով, որ կոչուեմ է կէս-կող. իսկ $\frac{1}{4}$ ծաւալով էլ աւելի փոքրը՝ ուսկ (Ժ.):

Բթոց. *)

Բթոցի նկարը չէ մտած նկարների մէջ. Բթոցները լինում են զանազան տեսակ և զանազան անուններով, մեծը՝ քթոց, միջակը՝ չափաւան, (Թ.) շատ փոքրը՝ չափիւկ (Թ.):

Բթոցով լարդը կալից կրում են մարագ. իսկ ձմեռը մարագից զոմերը: Չափաւանով ու չափիւկով բաժանում են գրաստներին:

Ջուալ. **)

Ջուալի նկարը նույնպէս չկալ. նրանով հացահատիկները կրում են կալից շտեմարան, տանում ջրաղացն աղալու, ալիւր դարձնում բերում տուն և այլն:

Լ. Կնւ՛. նկ. X.

Կեմը ոլորում են փափկացրած ճկուն խոտից: Սրա երկարու-թիւնը նախելով գործածութեան՝ զանազան է լինում: Սա եւ լակտնով են մանում ինչպէս սամոտան:

Կեմը գործ են ածում խոտնոցից խոտ կրելու, քթոցին ձիւլ շինելու, գոխերին բուն հիւսելու համար. բացի դրանից կեմով ձմեռը գոմէշներին, երբեմն էլ եղջերի պոչը կապում են առաստաղից, որ ծալքը գետին չընկնի և չկոտորի:

Յովհաննէս Մալխասեան

*) Բթոցը շինում են ալպէտ. գծում են երկրի երեսին շրջա-նաձև գիծ. նրա վրայ շարում ճկուն ուռեր. ալդ տնկած ուռերի ծալքերն իրար հետ վերելում կապում, ապա բարակ ուռնու ոստերով հիւսում. հուսկ ետոյ ամրացնում են բերանի մօտի մասերն ու տակի մասը:

**) Ջուալը գործում են փուլակները ալծի մազի մանածից իրենց դազ գա հն երի (Թ.) վրայ:

